Քաղվածք

Արևմտեան Հայաստանի Ազգային ժողովի (Խորհրդարանի) Նախագահության թիւ 11 / 2014.06.11 նիստի արձանագրությունից

Նիստին մասնակցեցին Արևմտեան Հայաստանի Ազգային ժողովի (Խորհրդարանի) Նախագահության 11 անդամներ:
Հրավիրվածէին Արևմտեան Հայաստանի Նախագահ Արմենակ Աբրահամեանը, Արևմտեան Հայաստանի Վտարանդի Կառավարության Վարչապետ Տիգրան Փաշաբեզյանը և Արևմտեան Հայաստանի Ներքին գործերի Նախարար Մարտիրոս Շահբազյանը:

3-րդ կետ. «Արևմտեան Հայաստանի հայերի ազգային ինքնության եւ քաղաքացիության անձնագրերի տրամադրման գործընթացի վիճակի մասին»:

Լսելով ԱՀ-ի Ներքին գործերի Նախարար Մարտիրոս Շահբազյանի հաշվետվությունը, ինքնության և քաղաքացիության անձնագրերի տրամադրման վիճակի մասին,

Լսելով Արեւմտեան Հայաստանի Նախագահ Արմենակ Աբրահամյանի, Արևմտեան Հայաստանի Վտարանդի Կառավարության Վարչապետ Տիգրան Փաշաբեզյանի բացատրությունները և Ազգային Ժողովի (Խորհրդարանի) Նախագահ Արմեն Տեր-Սարգսյանի տեղեկատվությունը Կարօ Արմենյանի (ԱՀ-ի Հյուպատոս ԱՄՆ-ում, Լոս Անջելոս) և ԱՀ-ի Վտարանդի Կառավարության ներկայացուցիչ ԱՄՆ-ում Պետրոս Հաջյանի բացատրությունը, վերոհիշյալ հարցի վերաբերյալ, պարզվեց հետևյալը.

1) Արևմտեան Հայաստանի Արտաքին գործերի Նախարար Արամ Մկրտչյանը միտումնավոր գործունեությամբ, չարաշահելով իր պաշտոնական դիրքը, անօրինական հրամաններ էր տալիս ԱՄՆ-ի Լոս Անջելոսի հյուպատոս՝Կարօ Արմենյանին, Արևմտեան Հայաստանի հայերի ազգային ինքնության եւ քաղաքացիության անձնագրերի տրամադրման վերաբերյալ:

2) Նա անօրինական միջամտում է Արևմտեան Հայաստանի ներքին գործերի աշխատանքներին, խախտելով՝ «Արևմտեան Հայստանի քաղաքացիության ձեռքբերման մասին» օրենքը, որտեղ հստակ նշվածէ, որ «Արևմտեան Հայստանի քաղաքացիություն ստանումեն Արևմտեան Հայաստանի Նախագահի հրամանագրով» (գլուխ 2, հոդված 13):

3) Թերացումերով, ոչ հետևողական, գործելաոճով խառնվում է ԱՀ-ի Ներքին գործերի նախարարությանը վերաբերող ոլորտներին. մասնավորապես՝ԱՄՆ-ում ԱՀ քաղաքացիության անձնագրերի տրման գործընթացի: Սկզբնավորման ժամանակ Արամ Մկրտչյանն առանց իրավաբանական ամրագրման պայմանավորվել է ֆինանսական և կազմակերպչական հարցերի շուրջ: Իսկ որոշ ժամանակ անց, անկարող լինելով ամերիկյան կողմի հետ բերանացի պայմանավորվածությունները կյանքի կոչել, և քողարկել իր անզօրությունը, ԱՀ-ի Ներքին գործերի նախարարությանն է փոխանցվել այդ թերի գործը:

4) Արամ Մկրտչյանն Արևմտեան Հայստանի Վտարանդի Կառավարությանը ֆինանսական վնասներ է պատճառել մասնավորապես՝ Արամ Մկրտչյանի ուղղակի թողտվությամբ ԱՄՆ-ում հսկայական ծախսեր են կատարել Կարո Արմենյանը և Պետրոս Հաջյանը: Վերջիներս այդ ծախսերի վերադարձի մասին դիմում են ներկայացրել Արևմտեան Հայստանի Վտարանդի Կառավարությանը:

5) Առանց Արևմտեան Հայստանի Նախագահ Արմենակ Աբրահամեանի թուլտվությամբ հաձնել է Արևմտեան Հայաստանի Ազգային Խորհրդի կնիքի էլեկտրոնային պատճեն, որով վավերացվում է ԱՀ-ի անձնագրերը, Կարո Արմենյանին: Միևնույն ժամանակ ստելով, որ նա Արևմտեան Հայստանի Նախագահի կողմից ստացել է թույլտվություն այն հաձնելու և օգտագործելու մասին:

6) ԱՀ-ի Ներքին գործերի Նախարար Մարտիրոս Շահբազյանը բազմաթիվ անգամ դիմել է Արամ Մկրտչյանին, պահանջներով հանձնել ԱՀ-ի Ներքին գործերի նախարարությանը անձնագրային տվյալները, որը համարվում է գաղտնի և պահպանվում է միայն ԱՀ-ի Ներքին գործերի Նախարարի և Արևմտեան Հայաստանի Նախագահի ծառայողական արխիվում:

7) Արամ Մկրտչյանը հրաժարվում էր և խոչընդոտում մուծված անձնագրերի համար գումարները բյուջե վերադարձնել:

8) Միաժամանակ նշենք, որ համաձայն «Արևմտեան Հայաստանի պետական կառուցվածքի, Արևմտեան Հայաստանի Ազգային ժողովի պատգամավորների կարգավիճակի եւ Արևմտեան Հայաստանի Ազգային Ժողովի կանոնակարգի մասին» օրենքի.

38-րդ հոդվածի «Արեւմտեան Հայաստանի Նախագահը՝ Արեւմտեան Հայաստանի նախագահական խորհրդում քննարկումների ու որոշումների ընդունման միջոցով եւ Արեւմտեան Հայաստանի Սահմանադրության եւ Օրենքների համաձայն՝ սահմանում է պետության արտաքին եւ ներքին քաղաքականության հիմնական ուղղությունները»,

66-րդ հոդվածի «Արեւմտեան Հայաստանի ներքին եւ արտաքին քաղաքականության հետ կապված հայտարարություններ կարողեն անել՝
- Արևմտեան Հայաստանի Նախագահը,
- Արևմտեան Հայաստանի Վարչապետը,
- Արևմտեան Հայաստանի Ազգային ժողովի Նախագահը»,

և 67-րդ հոդվածի՝ «Այս հայտարարությունները եւ պարզաբանումները՝ իդեմս Արևմտեան Հայաստանի Նախագահի, Արևմտեան Հայաստանի Վարչապետի եւ Արևմտեան Հայաստանի Ազգային ժողովի Նախագահի, կարողեն բարձրաձայնել Արեւմտեան Հայաստանի համապատասխան կառույցների, մամուլի ծառայության լիազորված աշխատակիցները, ինչպես նաեւ Արեւմտյան Հայաստանի Արտաքի նգործերի նախարարությունը»:

9) ԱՀ-ի Նախագահի և ԱՀ-ի Վարչապետի հետ չհամաձայնեցնելով՝ Արամ Մկրտչյանը ինքնագլուխ հարաբերություններ է հաստատել տարբեր երկրների պետական, ոչ պետական, կուսակցական, քաղաքական (այդ թվում իսլամական), զինվորական կազմակերպությունների հետ: («Համաձայնեցնել» բայը այստեղ նշանակում է, վերադասից թույլատվություն ստանալ այդ գործողությունները իրականացնելու համար, այլ ոչթե՝ անելիքի մասին տեղեկացնել), որը չի համապատասխանում Արեւմտեան Հայաստանի Նախագահի կողմից հաստատված Արեւմտեան Հայաստանի արտաքին եւ ներքին հիմնական քաղաքականությանը:

10) Արտաքին գործերի Նախարար Արամ Մկրչյանը և ԱՀ-ի զինվորական կցորդ (տեղակալ) Սեթո Մալաթյանը, որին նա հովանավորում է, ուղակի սադրիչ, վարքաբեկիչ, կեղծ տեղեկություններ են տարածում սոցիալական ցանցերում Արևմտյան Հայաստանի պետական կառույցների, Արևմտեան Հայաստանի Վտարանդի Կառավարության անդամների և Արևմտեան Հայաստանի պետության ղեկավարի մասին:

11) Արամ Մկրտչյանն ինքնագլուխ, Արևմտեան Հայաստանի Վտարանդի Կառավարության անունից, չարտոնված նյութեր է տարածում՝ անվտանգության լրջագույն խնդիր առաջացնելով Արևմտեան Հայստանի ղեկավարության դեմ:

Նկատի առնելով վերոհիշյալ փաստերը, Արևմտեան Հայաստանի Ազգային ժողովի (Խորհրդարանի) Նախագահությունը

ՈՐՈՇՈՒՄ Է՝

ա) Արևմտեան Հայաստանի Ներքին գործերի Նախարար Մարտիրոս Շահբազյանին առաջարկել ամրապնդել հսկողությունը ԱՀ-ի անձնագրերի ձևավորման և հանձման հետ կապված, միաժամանակ նախազգուշացնել իր անձնական պատասխանատվության մասին:

բ) Արևմտեան Հայաստանի Ազգային Ժողովը (Խորհրդարանը) անընդունելի է համարում այն քայլերը, որոնք վնաս են հասցրել Արևմտեան Հայաստանին, նրա կառույցներին և անվստահություն է հայտարարում ԱՀ-ի Արտաքին գործերի Նախագահ Արամ Մկրտչյանին:

գ) Դիմել Արևմտեան Հայաստանի Նախագահ Արմենակ Աբրահամեանին և Արևմտեան Հայաստանի Վտարանդի Կառավարության Վարչապետ Տիգրան Փաշաբեզյանին, որպեսզի Արևմտեան Հայաստանի Արտաքին գործերի Նախարար Արամ Մկրչյանի վերաբերյալ վարչական և կադրային որոշում ընդունելու ժամանակ հաշվի առնել Արևմտեան Հայաստանի Ազգային ժողովի (Խորհրդարանի) Նախագահության կարծիքը անվստահություն հայտարարելու մասին:

Որոշումն ընունված է միաձայն.
Կողմ - 11,
Դեմ - 0,
Ձեռնպահ - 0:

Արևմտեան Հայաստանի Ազգային ժողովի Նախագահ՝
Արմեն Տեր-Սարգսյան

Արևմտեան Հայաստանի Ազգային ժողովի Քարտուղար՝
Սաթենիկ Ալեքսանյան

Արևմտեան Հայաստանի Ազգային ժողով
Խորհրդարան